

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԱՍՆԱԽՈՐ ՊԱՏՄԱԳՐՈՒԹԻՒՆ
Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՑ ՍԵՐԱՍՏԻՈՅ

ԳԼՈՒԽ Գ.

Յաղագս Բաղնադիմի հաճախողների՝ որքան եկին հասին ի վերայ Սեբաստիոյ եւ վասն մահուան Եկեղեցի Արքեպիսկոպոսին եւ յաջորդելոյ այլոցն: (Չամբ. Պատմ., Բ. Հասար., էջ 974-975: Ուսման, Եթ = 1060):

Յաւուրս յայտնեի Տաղարիւ արքայն Պարսից տեղեկացեալ 'ի Սէրս Խորասանայ թէ Յոյնք տկարացեալ են 'ի զօրութենէ եւ չէ փոյթ պահել նոցա զաշխարհ Տէրութեան իւրեանց՝ եղ 'ի մօր վերստին արձակել զգուհոյ զօրաց 'ի վերայ նոցա եւ ապականել զաշխարհն սահմանաց նոցին: Շարժեալ ապա զամենայն աշխարհն Պարսից եւ Սկիւթացաց եղևոց ընդ իշխանութեամբ իւրով՝ զուժարհաց զանթիւ զանհամար բազմութիւն մարդկան եւ ետ 'ի ձեռս երից զօրավարաց իւրոց՝ որոց անուանք էին՝ Սամուել, Ամուրքաֆ, եւ Գիճաղիջ, եւ առաջնաց զնոստ յաշխարհն Հայոց՝ յամենայն սահմանս՝ յորս տիրեալ էին Յոյնք՝ պատուէր տուեալ նոցա յազարտ վարիւ զաշխարհն եւ զնալ մինչեւ 'ի Սեբաստիա եւ աւերել զքաղաքն զայն: Հօրդան տուեալ զօրացն Պարսից անարգել խաղացին յաշխարհն Հայոց՝ իբրեւ զյորձանս գետոց եւ հեղեղեցին զերկիրն առ հասարակ եւ որպէս ընթանայ հուր ընդ եղէզն՝ այնպէս ընթացան սոքա ընդ աշխարհն եւ լափեցին զամենայն՝ զորս գտին՝ մինչեւ հասին 'ի գաւառն Սեբաստիոյ, ուր եւ ապականեցին զգեղեցեղութիւն զաշտաց նորա եւ արեւմտ ներկեցին զընդարձակութիւն վայրացն եւ հուրք ծախեցին գրեթէ զամենայն ուսանս եւ զգեղաց նորա իբրեւ սղդ եղև այս արշաւանք նոցա 'ի քաղաքս Սեբաստիոյ՝ փութացեալ Ատովմայ եւ եղբոր նորա Արուստիայ՝ փախեալ անտի հանգերձ իշխա-

նօքն Հայոց եւ գնացին յաւանն Խաւատանէք եւ ամրացան անդ, զի անուրիկ էր այն, իսկ զօրքն Պարսից հասեալ պաշարեցին զՍեբաստիա յաւուր Բարեկենդանի Վարդապետին, եւ զի ոչ ունէր քաղաքն պարիսպ հաստատուն՝ յորդեալ եւ զեղեալ նոցա առ հասարակ 'ի ներքս հարին 'ի բերան որոյ զամենայն հասակ մարդոյ, որոց մարմինք իբրեւ զփայտս անտառի կուտեալ լինէին 'ի վերայ երկրի, եւ տրիւնք նոցա իբրեւ զհեղեղա՝ հոսեալ ընդ փողոցս յորդութեամբ զեղուին 'ի գետն, որ անցանէր ընդ մէջ քաղաքին, որով եւ ջուրք գետոյն 'ի գոյն տրեան գնային եւ անկանէին յԱլիս գետ: Եւ յետ այսր հարուածոյ յափշտակեցին զամենայն քանձաւ Ատովմայ եւ զամենայն ինչս, զորս գտին 'ի Տանս պիտանի, եւ որոշեալ՝ առին յինքեանս անչափահաս մանկուսն եւ զաղջկուսն եւ զտիկնայս, եւ ապա արկին հուր 'ի քաղաքն յամենայն տեղիս. յապարանս եւ 'ի միճամեծ շինուածս եւ յեկեղեցիս, զորս՝ հորիւր թուէ Ուրնայեցի Պատմիչն, ամենեքին զմեթալէնք եւ անեղք եւ որք ապրեալ էին 'ի սրոյ՝ մաշեցան 'ի հրոյ եւ այնպէս 'ի սակաւ ժամու մոխիր դարձաւ Մեծ Քաղաքն Սեբաստիա եւ ամենայն սահմանք նորա, եւ եղև իբրեւ զհիւղ մի մրգապահաց, թէպէտև յետոյ փոքր մի եւ նորոգեցաւ: Իսկ զօրացն Պարսից կացեալ 'ի կողմանս յայնտեիկ զաւուրս ունին, առին զամենայն աւարն եւ զգեղիսն եւ գնացին յաշխարհն իւրեանց, եւ Ատովմայ քաղաքն ելեալ գնաց 'ի Կ. Պոլսոյ, եւ կացեալ անդ ժամանակ մի զարձաւ 'ի Սեբաստիա (ՇԺ = 1061), եւ յետ իբրեւ երից ամաց զալստեանս Ատովմայ արքայի եւ եղբոր նորին Արուստիայ 'ի Կ. Պոլսոյ (ՇԺԳ = 1064) ժամանեալ հրաւէր երկնային կողմանս՝ եւ վճար հասեալ կենաց Ե-

զինէ Արքեպս.ին Սկրտատիրոյ հանգեալ առ Քրիստոս և նստու 'ի տեղի նորին' հրամանաւ Աստուծոյ արքային Տէր Խաչատուր Արքեպս.ն, որ էր այր խոհական և իմաստուն: Սա հովուեաց զհոս Բրիտանոսի աշակուղը տքնութեամբ և բազմավիշտ տառապակրութեամբ ամս իրբն 31, մինչև ևս փոքր մի ոգի տունալ Սերաստիա՝ Սպարապետն Պարսից Խրուհ՝ որ 'ի գիրս մեր կտրին ասի, 'ի տունին Տուգրիլի, տպատամբնալ յԱլփուսլանայ՝ դիմեաց զօրու ծանու՝ ի սահմանն Հայաստանի (ՇԺԸ = 1069, Ուրհայեցի): Ել ընդդէմ նորա Մանուէլ կիւրապաղաթ, զօրավոր Յունաց, այլ 'ի պարտութիւն մատնեալ՝ ձերբակալ եղև 'ի պատերազմի և զօրք նորա՝ յերեսանցնորա ցրուեալ 'ի փախուստ դարձան, և ապա համարձակ յառաջ խաղացեալ յաւարի էառ զպատերազմեալ ահալիս, և յարձակեալ 'ի կողմանն Սեբաստիոյ բազում նեղութիւնս հասոյց Ազգիո Հայոց:

Զայս ամենայն լուեալ Տիւմէն կայսր (ՇԺԹ = 1070) զօրոտողով արար զանհամար մարտիկա, և դիմեալ 'ի վերայ Պարսից, Յանցանել նորա 'ի Սիրաստիայ՝ ընդ առաջ ելին նմա թագաւորն Ասողմ և եղբայր նորա Արուստիւ և ընծայեցին նմա բազում նուէրս, իսկ թշնամիք նոցա՝ իշխանքն Յունաց՝ որք չէին յայնոսիկ կողմանս՝ բազում բանիւք չարախօսեցին զնոցանէ և զազգէս Հայոց, 'ի հարկանել ասին Խրուհայ՝ զաշխարհս մեր, սոքա առաւել կոտորեցին զմեզ քան զզօրս նորա, և թէ գրգռիչք Պարսից սոքա են Հաւատաց անմիտ կայսրն զարաւնութեանց նոցա առանց քննելոյ և հրամայեաց զօրաց իւրոց յաւարի առնուլ զնորոգեալն Սերաստիոս՝ զոր տաւրեալ նոցա քաղաքս՝ արարին և բողոքմ կոտորածս: Զայս տեսեալ իշխանաց Յունաց և Հայոց՝ որք եկեալ էին ընդ կայսրն 'ի Կ. Պոլսոյ, շարժեցան 'ի գաւթ 'ի վերայ Հայոց և ազգեցին զկայսրն դադարեցուցանել ըզգօրսն յանիրաւ գործոյ անիւ, և կայսրն թէպէտ լուաւ նոցա, բայց ընկէց իշխանութենէ զԱսողմ և զԱրուստիւ, և սպառնացաւ նոցա 'ի դառնալ իւրում 'ի Պարսից 'ի Յոյն դարձուցանել զնոսա և զա-

մենայն Հայս ընդ նոսա: Ապա հորդան տուեալ զօրացն Տիոմէն՝ խաղաց 'ի Տուրուերտն Հայոց, և դիմեալ 'ի վերայ Մանազկերթի էառ զայն, և զօրս եգիտ 'ի քաղաքի անդ 'ի Պարսից խողխողաց արով: Լուեալ Ալփուսլանայ զարշաւանս կայսրն, դիմեաց և ինքն 'ի վերայ նորա և 'ի դաւաճանել զօրացն Յունաց՝ մատնեցաւ կայսրն 'ի ձեռս Ալփուսլանայ՝ զոր յետ սակաւաւ արձակեաց զնա տեղով իրբ 'ի նախատինս նմին. աշտեալ է իմ ընդ սահման օրինաց ձերոց՝ զօր ասէք. Բարի է՝ բարի առնել թշնամեաց 'ի նմին իրի և ես շնորհմ քեզ զկեանս և զթագաւորութիւնս քոս: Իրբն 'ի Կ. Պոլսի լուան զմեռանելն նորին, կացուցին կայսր ըզՄիքայէլ զորդի Տուգիւնայ և յետ պատեւրազմոց ինչ՝ հրովանուա Միքայէլի բրեցին զաչն Տիոմէնայ և եղին 'ի մենաւտանի միոյ՝ ի Պաստա կղզին, ուր մեռաւ նա չարաշար: Որպէս պիղծն Յուլիանոս ապոստալով արբոյն Բարսղի՝ գնաց 'ի Պարսա և խոցեալ 'ի Մեռակերթոսէ սատակեցաւ և այլ ոչ դարձաւ (ՇԻ = 1071), սոյնպէս և Տիոմէն մեծաւ խորխառնօք օպառնալով ազգիս մերոյ՝ էանց գնաց և ոչ կարացեալ հասանիլ ըզձից իւրոց՝ այլ ի բազմավիշտ տառապանս իւրում փչեաց զոգին և բարձաւ 'ի միջոյ (Վահրամ և Ուրհայեցի: ՇԻԹ = 1080): Եւ յետ ամաց իրբն ըննից մեռանի 'ի միում 'ի Ասողմ արքայ՝ որդի Սենեքերիմայ և եղբայր նորին Արուստիւ, օրով և բարձաւ թագաւորութիւնն Արժուռնեաց և ամենեւին անծանօթ եղև կարգ ազգի նոցա: Եւ յետ հնգետասան ամաց մեռաւ Խաչատուր Արքեպս.ն՝ քաղաքիս Սերաստիոյ (ՇԽԴ = 1095, Վարդան Պատմիչ) և եղաւ ի վանս Սուրբ Նշանի և կացուցին 'ի տեղի նորին իշխանք ազգիս մերոյ զՅովսէփ Արքեպս.ն (ՇԽԹ = 1100) որ բազում տառապանս և զվիշտս կրեաց, զի յառուրո նորա իշխան օմն յազգէս Հայոց՝ նեղեալ յոսէ 'ի բռնութենէ Յունաց՝ գնաց 'ի Պարսա և ուրաւաւ զհաւատաւ՝ ընկալաւ յարքայէն Պարսից զիշխանութիւն կուսակալութեան սահմանացն Սեբաստիոյ և Յունական կողմանց, և կարգեցաւ Դանիշման և պատերազմեալ զօրօք Պարսից՝

ՀԱՄԱՌՈՑ ԵՒ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ ՄԵՐ ԵՒ ԲՈՅՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՏՕՆԱՑՈՑՑԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԵՒ ՍԱՂԻՄԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաջաւորաց Բարեկենդանով կը սկսի շարքը Զատիկան տօներուն, որոնք մեր Եկեղեցւոյ մօտ կը շարունակուին մինչև վարդապետի յաջորդող Եշ. օրը, գրաւելով մօտ կէսը տարւան: Զատիկն 70 օր կամ 10 եօթնեակ առաջ ինկող այդ կերակի օրը նաև միւս Արեւելեան Եկեղեցիներու մօտ կը սկսի Զատիկի հաշիւը: Յոյնք զայն կը կոչեն Դրիոսիոն, որ կու գայ դրիւս — երեք — բառէն, նշելու համար սկիզբը բուն Բարեկենդանը կամ Մեծ Պահքը կանխող երեք եօթնեակներու նախապատրաստութեան շրջանին: Զայն կը կոչեն նաև Փարիսեցիի եւ Մաքսաւորի կիրակի: Ղպոսոց մօտ Յովնանու Բարեկենդանի կիրակին է աւ. որուն յաջորդող չորս օրերը նկատուած են իբրև Յովնանու

պահք, նմանողութեամբ մեր Առաջաւորաց շարքապաշին, որ հաստատուած ըլլալ կը թուի Ս. Լուսաւորչէն և որուն վերջին օրը՝ Ուրբաթ, կը նշուի արգէն Յովնան մարգարէի յիշատակը: Յունաց մօտ այդ եօթնեակի Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը կոչուած են Կոնոնուզացներու Չորեքշաբթին և Ուրբաթը: Արեւմտեան Եկեղեցիներու մօտ, Զատիկան շրջանը կը սկսի Եօթնասներորդաց Կիրակիով, որ սակայն կ'իյնայ մեր Առաջաւորաց պահոց յաջորդող Կիրակիին, այսինքն միայն Չշաբթիներ կը բաժնեն զայն բուն Բարեկենդանէն: Ներկայիս միայն Անկիւբան Եկեղեցւոյ մօտ մնացած է աւ: Վատիկանի Բ. Ժողովի որոշումով, Կաթողիկէ Եկեղեցւոյ մօտ ներկայիս միայն Օր Մոխրո-

ընդ Յոյն և ընդ Լատինս, բազում հարուածս հասոյց նոցա և մեծաւ անձկութեամբ առաւաղեցեցեալ վշտացուցանէր թագգո Հայոց 'ի Սեբաստիա և 'ի սահմանս նորին (ՇԾԳ — 1104): Եւ յետ չորից ամաց սատակեցաւ: Յետ կրկւոյ զբաղում խոշտանգանս և զնեղութիւնս՝ հանդարտեալ ժամանակս ինչ Յովսէփայ Արքեպս.ի քաղաքիս Սեբաստիոյ և հասեալ յաւուրս ժերութեան փոխեցաւ առ Քրիստոս և թողեցաւ 'ի վանս Սուրբ Նշանի (ՇԿԶ — 1107, Յուլիւս 28): Եւ նստաւ 'ի սեղի նորին Տեսուչ զՏէր Դաւիթ Արքեպս.ն: Սաւուրս որոս Ալիբաս ամիրայն Սեբաստիոյ՝ որդի թոռանն Դանիշմանայ նահապետեալ զբաղումս յազգէս Հայոց, իշխան ոմն Դաւիթ անուն ունէր զհինգ օրդիս՝ Գուարինէ, Արև, Ռաաիկոս, Մամիդոս և Տուքիկոս, և եղև 'ի յարձակելն Սկիւթացոց գերեցաւ Դաւիթ երէց որդւովն, (Շարունակելի՛ 3)

և ինքն ուրացաւ զհաւատս Քս.ի, բայց կին նորա սնոյց զչորեանին որդիս իւր 'ի վարս Աճալադութեան՝ որոց 'ի չափու հասեալ՝ երեք 'ի նոցանէ վասն քաջութեան իւրեանց կարգեցան 'ի զինուորութիւն ամիրային Ալիփաասայ, իսկ Ռաաիկոս կրօնաւորեցաւ 'ի վանս Ս. Նշանի: Եւ 'ի չարախօսել ռմանց զչորեցաւնց եղբարց միանգամայն ամին առաջի Ամիրային և յետ բազումս հրապուրելոյ զնստս ուրանալ զհաւատս, իբրև ետես թէ ո'չ առնուն նոքա յանձն՝ բազմադիմի դառն առնջանօք ետ չորչորիկ զնստա, և հուսկ յետոյ հատին զգլուխ նոցա, զորս ամփոփեալ քրիստոնէից թաղեցին մերձ 'ի ճանապարհն Քառակուսի ասացեալ և կարգեցաւ առն վասն նոցա՝ անուանեալ ՎՏԵ Գոհարինեանց ըստ որում մեծն 'ի նոցանէ կոչիւր Գոհարինէ:

ՏԻԳՐԱՆ Ս. ՔԻՐԻՇԵԱՆ